

կը նմանի , որուն արմատները ճերմակ է ու ծիլը կանանչ :

Հիմայ ճարը տեսնանք . դից հաշիւ պիտոր տանք մեր կենացը համար , ու մարդկանց մեր անունին համար : Թէ որ այգինիս աւրուեր , ծառերը կոտըրտեր են , ինկած ողկուզներն ու պտաւլները ժողվենք . ան ալ թէ որ չգտնանք , այսինքն բարեգործութիւն մը՝ առաքինութիւն մը՝ անցուցած կեանքերնուս մէջ որ չգտնանք , գոնէ բարի բաղձանք ներով անոր տեղը լեցընենք : Դիք անանկ բարի են որ եթէ ոսկեղէն բարեգործութիւններ չկրնանք ընծայելու իրենց , ալզնձէ բաղձանքնիս ալ կ'ընդունին՝ վարքերնիս փոխելու որ ըլլանք : Ո՛վ կլողիոս ու կլողիա . ճեր տղայութեան ալիւրը մոլութիւններու տուիք , դոնէ ճեր ծերութեան թեփըդից տուեք : Միաքս դրածէս եւել գրեցի , բայց չեմ ուզեր որ դրածս ուրիշներու ճեռք անցնի . չըլլայ որ ճեղ խենթի տեղ գրնեն , զիս ալ յանդուզն ու անխոհեմ մարդու : Ամեն դրացիներնուս բարև , մանաւանդ դրուսիանա պատուելի որքեարին : Երկու հազար արծաթ զահեկան կը խրկեմ . հազարը փորուինա ճեր թոռանը՝ ինծի տօնին օրը ըրած ծառայութեանը համար : Փաւստինա հիւանդ անկողնի մէջ է , անոր համար մէկալ հազարն ալ եստեան կուսանաց տուէք , որ ազօթք ընեն դից իրեն առողջութեանը համար : Ինքը սնտուկ մը կը խրկէ կոր քեզի ով կլողինա . կ'երդնում որ մէջի եղածը չեմ զիտեր : Դիք՝ ճեղի որ ծերացեր էք , բարի մահ տան . ինծի ու փաւստինիս ալ բարի կեանք : Մարկոս ճեր դրացին իր ճեռքով դրածն է :

Նորին այն բուղբն որ դեռ կայսր չեղած գրեց Գուետիանոսի .

Մարկոս ատենաբան Հռոմայեցի ծնեալ 'ի Մոնթէչէլիօ՝ առ քեզ Դոմետիսնոս կապուացի ողջոյն . դիք գրեզ միմիթարեն : Մաստիկ ձմեռը առ կողմերս

խիստ մրրիկներ ըրաւ , մրրիկներն ալ շատ անձրև ու խոնաւութիւն պատճառեցին , անկէց ու շատ հիւանդութիւն առաջ եկաւ . մանաւանդ ոտնաւութիւն ու ձեռնաւութիւն : Ասիկայ գրելուս պատճառն է որ չկրնալով ոչ քալել և ոչ գրել , չեմ կրնար երկընցընել թուղթը որչափ որ պէտք էր , որչափ որ դու արժանի ես , և որչափ որ ես կը բաղձամ :

Լսեցի որ ձիու մը համար կուելով Պատրիկիոս դրացիիդ հետ՝ կապուայէն հեռացուցեր ու Մամերթինու բանար զրուեր ես . ունեցածդ չունեցածդ ալ առեր են , զաւկըներդ ալ աքսորեր ու տունդ փլուցեր են : Ամենէն եւել անոր վրայ ցաւեցայ՝ որ զքեզ խորհրդարանին պաշտօնէն հաներ ու եղբօրորդույդ հետ տասը տարի աքսորեր են : Լսեցի ալ որ խիստ նեղութենէդ բոլոր օրը կուլաս եղեր , գիշերը չես քնանար , ընկերութիւն չես ուզեր , մինակ կենալ կ'ախորժիս , զբօսանքէ կը խորշիս , տրտմութեն կը սիրես : Չեմ զարմանար , վասն զի տրտում սիրտը լալով կ'ապրի , ուրախութեամբ կը մեռնի : Կորսընցուցած բաներուդ վրայ շատ կը ցափմ . բայց աւելի ցաւս անոր վրայ է որ ձիու մը համար այդչափ բան եկեր է դլուխդ , ու ամեն բան կորսընցուցեր ես : Ո՛հ որչափ անհաստատ է բախտը , պզտի բանով մը այնչափ թշուառութիւններ կը պատահին : Զարիքը աչուընուս առջին է ու չենք տեսներ . ճեռքով կը բռնենք ու չենք զգար , ոսուընուս տակն է ու չենք ճանչնար , ականչնէս վար կը խօսի ու մտիկ չենք ըներ , կը պոռայ ու չենք իմանար . վասն զի չենք ուզեր իմանալ , ու ան ատեն կը զգանք վտանգը՝ երբոր ալ ճար չիկայ : Պզտի կայծով մը տունդ կ'այրի , պզտի ժայռի մը զարնուելով նաւդ կ'ընկլմի , պզտի քարի մը գալով ոտքդ կը վիրաւորուի . ըսել կ'ուզեմ որ չկարծած պզտի բանէդ շատ անդամ ամեն վրտանդ կը ծնանի : Նաւապետը անտես ժայռերէն աւելի կը վախէ քան յայտնի ալէկոծութենէ , զօրավարը աւելի

կը վախէ ծածուկ դարանակալութենէ
քան յայտնի զօրաց գունդերէն . կ'ու-
ղեմ ըսել որ խելացի մարդը աւելի պի-
տոր զգուշանայ իրեններէն քան օ-
տարներէն , բարեկամներէն քան թըշ-
նամիններէն , խաղաղութեան ատեն
քան պատերազմի , գաղտնի վտանգէ
քան յայտնի մնացէ : Քանիներ տեսեր
ենք որ ծախորդութեան մէջ բախտը
չկրցաւ զիրենք կործանել , ու յաջողու-
թեան ատեն քիչ մը որ անհոգ եղան՝
զլխիվար բերաւ զիրենք : Ո՞վ կրնայ
վատահիլ բախտին , երբոր ասանկ պըզ-
տի բանի մը համար այդչափ խռովու-
թիւն հաներ է չոռմայու մէջ , ու քու-
տունդ կործաներ է : Աս բաները տես-
նելով՝ ոչ անոր սպառնալիքէն կը վա-
խեմ , և ոչ շոյելուն կը հաւտամ . ոչ ար-
ւածին կը հաւնիմ , և ոչ առածին հա-
մար կը նեղիմ . ոչ իրաւը ըսելուն ա-
կանջ կը կախեմ , և ոչ սուտ ըսելէն կը
խաբուիմ . ոչ ետեկս գալուն համար
կ'ուրախանամ , և ոչ զիս վորնտելուն
համար կը տրտմիմ : Գիտես ինչու . վասն
զի կեանքերնիս կասկածելի բան մըն է ,
ու բախտը անանկ յանկարծական՝ որ
շատ անգամ առանց սպառնալու կը վի-
րաւորէ , շատ անգամ ալ կը սպառնայ
ու չիփիրաւորեր . շատ անգամ նետը կը
նետէ ու չզարներ . շատ անգամ ալ ա-
ռանց նետ նետելու կը զարնէ : Հաւտա-
ինծի ով դոմետիանոս , որ մեր կեան-
քը ան ատեն աւելի վտանգի մէջ է ,
երբոր աւելի ապահով կարծելով ան-
հոգ կը կենանք . կ'ուզես իմանալ որ ը-
սածս ինչպէս իրաւ է . չերակլէս այն-
չափ վտանգներէ ազատեցաւ ընդ ծով
և ընդ ցամաք , ու ետքը հարծի մը ձեռ-
քէն՝ որուն սիրահարեր էր՝ մեռաւ :
Լաւոմեղոն ջրովագյի պատերազմին
վտանգներէն ապրեցաւ , ու իր տանը
մէջ զինքը սպառնեցին : Աղեքսանզը որ
այնչափ բարեբախտ էր՝ բոլոր աշխարհ-
քի հետ պատերազմելով չմեռաւ , ու
քիչ մը թոյնով կեանքը կորալնցուց :
Կայիսոս կայսրը յիսունուերկու պատե-
րազմի մէջ քաջութիւններ ընելէն ետ-
քը , խորհրդարանին մէջ քսանուեր-

կու հարուածով տիգահար սպանուե-
ցաւ : Ասկիլիպիոս Պոմպէոսի եղբայրը
քսան տարի ծովու վրայ աւազակու-
թիւն ընելով՝ ողջ մնաց , ու օր մը ջըր-
հորէն ջուր քաշելու ատեն մէջը ինկաւ
խզգուեցաւ : Ակիւղիոնի տասը զօրա-
փարները Ափրիկէ այնչափ պատերազմ-
ներու դիմացան , ու ետքը կամուրջի մը
վրայ իրար ծաղը ընելու ատեն ինկամն
խզգուեցան ամենը մէկտեղ : Դրուսոս
Պարթեներուն յազթելէն ետքը՝ յաղ-
թանակին օրը աղիւս մը զլխուն վրայ
ինկաւ , ու ատ մնոտի փառաւորութիւ-
նը իր զլուխը կերաւ : Ալ ինչ կ'ուզես
որ ըսեմ . լուչիա քոյրս կուրծքը ասեղ
մը ունէր , զրկի զաւակը մօրը հետ խա-
զալով՝ ասեղին զարկաւ ձեռքը , ասեղը
ներս մտաւ սպառնեց զմայրը : Կնէսոս
Ռուփինոս զլուխը սանտրելու ատեն՝
սանտրին մէկ ակռան զլուխը մտաւ , ու
ասանկ պղտի դիպուածով մը իր պա-
տուական կեանքը կորալնցուց : Ասոնց
նման զեռ անմժիւ օրինակներ կրնայի
բերել , որ այնչափ բարեբախտութեան
ետեկն անանկ դժբախտ եղան , ու այն-
պէս փառաւոր կեանք ունենալով՝ այն-
չափ թշուառ մահ ունեցան : Անոնք իմ
տեղս որ ըլլային , չեմ դիտեր ինչ կը
բաղձային . բայց ես անոնց տեղն որ ըլ-
լայի , շատ աւելի կ'ուզէի թշուառ կեանք
ունենալ ու փառաւոր մահ , քան թէ
թշուառ մահ ու փառաւոր կեանք : Վասն
զի գէշ մահը մարդուս բոլոր կեանքը
երկբայելի կ'ընէ , իսկ աղէկ մահը ան-
ցած կեանքը նայել չտար :

Ինչպէս որ թուղթիս սկիզբը գրեցի՝
ոտքիս ցաւը չթողուր որ երկընցընեմ .
երկու օր է որ քու վրադ ունեցած սէրս
կը պատերազմի ցաւոցս հետ . կ'ու-
զեմ իմ ձեռքովս զրել քեզի , մատուր-
ներս չեն կրնար զրեչը բունել . ասոր
գեղը ան է որ՝ որովհետեւ ես չեմ կրնար
ուզածս ընել , զուն կրցածովս գոհ ըլ-
լաս : Փաւստինս քեզի բարե կ'ընէ , հի-
ւանդութեանս համար տրտում է : Լսե-
ցի որ երեսիդ վրայի սպիրը խիստ աշ-
քի կը զարնեն . քեզի կշիռ մը բա-
լասան կը խրկեմ որ քսես , որպէս զի

անցնի: Թէ որ կանանչ նուշ, թարմ
քնկուզ, ու վայրի կաղին գտնէ, փաւս-
տինս կը խնդրէ քեզմէն որ խրկես: Հի-
մակու հիմայ ստակս քիչ է. բայց քե-
զի ու կնոջդ մէյմէկ զգեստ կը խրկեմ,
ու կը խնդրեմ 'ի դից՝ որ տան քեզի
ինչ որ քեզի կը բազմամ, ինծի ալ
տան ինչ որ զուն ինծի կը բազմաս: Թէ-
պէտ ուրիշի ձեռքով է գրածս, բայց
իմ սրտովս:

Քանաստեղծ երիտասարդի մը կենաց
մէկ էջը.

1757ին աշնան գեղեցիկ իրիկուն մը
արեն իր մայրը խոնարհած՝ վերջին ճա-
ռազայթներովը կը լուսաւորէր Զուի-
ցերիոյ Վալէ նահանգին արտորանե-
րը: Մօս քանուհինդ տարուան երի-
տասարդ մը կը քալէր մինաւորիկ այն
նրբուղիներէն մէկուն մէջէն՝ որ զանա-
զան կողմերէ դալով կը կտրեն Ս. Մաւ-
րիտիոս աւանին և Սիոն քաղքին մէջ
տեղն երկլնցած մարգագետինները:
Թէպէտ ճամբորդին ողորմելի հադուս-
տը և գաւազանի մը ծայր ուսու զար-
կած ճերմակեղէններու կապոցն իրաղ-
քատութեանը նշան էին, սակայն ոչ
դործաւորի և ոչ գեղացւոյ կրնար նր-
մանցուիլ. ձեռուրները ճերմակ և բա-
րակ էին, հասակը բնական վայելու-
թիւն մը ունէր, որուն չէին կրնար յաղ-
թել իր գդեստներուն ոչ պապենական
կտրուածքը և ոչ հաստկեկ նիւթը: Ան-
շուշտ արուեստագէտ և կամ բանա-
ստեղծ մը պիտի ըլլար որ խելքին փշե-
լով ըսեմ, կամ թէ հարկէն ստիպուած,
հետի կ'ելլէր կ'ինար Զուիցերիոյ լեռ-
ներն ու հովիտները, բնութիւնը սոր-
վելու և անոր գեղեցկութիւններէն ներ-
շընչուելու համար:

Ինչ որ ալ ըլլար, ճամբորդը նոյն ա-
տեն սաստիկ տկարացած կը տեսնուէր:
Արդեօք աշխատութենէն էր, անօթու-
թենէն էր. աս յայտնի է որ երբ հասաւ

անանկ տեղ մը ուր իր գացած ճամբան
երկու այլ և այլ ուղղութեանց վրայ
կը բաժնուէր, յանկարծ կանկ առաւ.
ու փոխանակ քալուածքը շարունակե-
լու ձախ կամ աջ կողմը, մէկ երկու
ոտք ալ առաւ այն գաշտին մէջ որուն
չորս դին կը պատէր ճամբան, ու եր-
կայն բարակ խոտին վրայ փուելով
մացառուտի մը տակ՝ աշուրները խփեց:
Բառորդ մը տեսեց չտեսեց իր քունը. սա-
կայն երբոր արթընցաւ՝ տեսաւ որ այն
կարճ ժամանակին մէջ օրը զգալապէս
անցեր էր:

— Ո՞հ, ըսաւ կէս մը ելլելով և աս-
դիս անդին նայելով, անցաւոր մը հան-
դիպցընելու ակնկալութեամբ, աստղե-
րուն տակը պիտի ֆնանամ. ամառն ըլ-
լայինք նէ փոյթս չէր, մանաւանդ թէ
որ ըլլար ստամոքսս գրեթէ պարապ...
քստկիս պէս: Բայց մէյմը ճիշդ հաշիւ-
ընեմ ունեցած հարստութեանս:

Եւ իր մթնագոյն զգեստին գրապան-
ները խառնելով դուրս հանեց ոպնիա-
զի նման նկարուած փայտէ սրինդ մը,
քանի մը ճերմակեղէն, փոխադրական
եղջերածե կաղամար մը, կլորցուցած
թղթերու տետրակ մը որուն շատ երես-
ները ճերմակ, իսկ մէկալնոնք անհա-
ւասար երկայնութեամբ տողերէ ծած-
կուած, հին Օլիվիէ ստորագրութիւ-
նով. ամենէն վերջը ելաւ հացի կտոր
մը, հիւսած քսակ մը խիստ թեթև, ո-
րուն մէջինը մէկիկ մէկիկ համրելով.
գումարը սկուտի մըն ալ չհասաւ:

— Ասկից ինչուան ձինեւոա, ըսաւ
ինքնիրեն, պէտք է աղէկ գիտնալ աս
պզտիկ գանձին յարգը: Բայց մէկ մը որ
հոն հասնիմ, անշուշտ հանճարս բանի
բերելու հնարք մը կը գտնամ, որպէս
զի կարենամ ճամբորդութիւնս առաջ-
տանիլ, կամ շատ շատ ինքզինքս Բրո-
վանս ձգել: . Անկէ վերջը, Աստուած
կ'ողորմի: Արդէն սրինգս շատ անգամ
ստացեր է ինծի ընթրիք մը և անկողին
մը, զորոնք այնպիսի բարի սրտով ընդ-
ուներ եմ որով որ կը չնորհուէին: ...
Բայց վախը կ'առնէ զիս որ ըլլայ թէ
աս իրիկուն երկուքէն ալ զուրկ մնամ:...